ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/17

ք. Երևան «07» 03 2022թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Հ. Սուքիասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման, ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Ծովակալ Իսակովի անվան թիվ 23 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման, ՀՀ Լոռու մարզի «Ստեփանավանի N1 վարժարան» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման, ՀՀ Լոռու մարզի «Ագարակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման, ՀՀ Լոռու մարզի «Վարդաբլուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման, ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Ղևոնդ Ալիշանի անվան N 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման, ՀՀ Լոռու մարզի «Ալավերդու թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Աշխատանքի ողջ ծավալով կատարման ժամկետ է սահմանվում՝

- ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների համար 365 օրացուցային օրը,

- ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Ծովակալ Իսակովի անվան թիվ 23 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների համար 365 օրացուցային օրը,

- ՀՀ Լոռու մարզի «Ստեփանավանի N1 վարժարան» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների համար 365 օրացուցային օրը,

- ՀՀ Լոռու մարզի «Ագարակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների համար 365 օրացուցային օրը,

- ՀՀ Լոռու մարզի «Վարդաբլուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների համար 290 օրացուցային օրը,

- ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Ղևոնդ Ալիշանի անվան N 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների համար 240 օրացուցային օրը,

- ՀՀ Լոռու մարզի «Ալավերդու թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների համար 290 օրացուցային օրը:

Պայմանագրով նախատեսված աշխատանքի սկիզբ է համարվում շինարարական աշխատանքների կատարման, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պայմանագրերի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրը:

Աշխատանքի կատարման երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից պայմանագրի արդյունքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

1.3.1 Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների և ծավալների կատարման ժամկետները սահմանված են օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

1.3.2 Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների մեջ չեն հաշվարկվում.

1.3.2.1 հեղինակային և/կամ տեխնիկական հսկողության պայմանագրերի լուծման դեպքում՝ պայմանագրերի լուծման օրվանից մինչև նոր պայմանագրերի կնքմանը հաջորդող օրն ընկած ժամանակահատվածը,

1.3.2.2 շինարարական աշխատանքների կատարումն անհնարին դառնալու օրվանից մինչև դրանց վերսկսելու օրն ընկած ժամանակահատվածը, որն արձանագրվում է տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների առաջարկության հիման վրա՝ պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված եզրակացությամբ:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքներն ամբողջությամբ կատարել անձամբ պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված

սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի 5 Հավելվածում (Աղյուսակներ N 1 և N 2):

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման

համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքները:

4.6 Աշխատանքն ամբողջությամբ ընդունելիս գործում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն: Ընդ որում՝ վերջին վճարման կատարողականի գումարը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

6) չի կիրառվում պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետը:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 1 350 000 000 (մեկ միլիարդ երեք հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ, որից 225 000 000 (երկու հարյուր քսանհինգ միլիոն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Ընդ որում՝

- ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների համար – 199 500 000 (մեկ հարյուր իննսունինը միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 33 250 000 (երեսուներեք միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն,

- ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Ծովակալ Իսակովի անվան թիվ 23 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների համար – 232 200 000 (երկու հարյուր երեսուներկու միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 38 700 000 (երեսունութ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն,

- ՀՀ Լոռու մարզի «Ստեփանավանի N1 վարժարան» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների համար – 163 800 000 (մեկ հարյուր վաթսուներեք միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 27 300 000 (քսանյոթ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

- ՀՀ Լոռու մարզի «Ագարակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների համար – 214 500 000 (երկու հարյուր տասնչորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 35 750 000 (երեսունհինգ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն,

- ՀՀ Լոռու մարզի «Վարդաբլուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների համար – 234 000 000 (երկու հարյուր երեսունչորս միլիոն) ՀՀ դրամ, որից 39 000 000 (երեսունինը միլիոն) ՀՀ դրամ՝ ԱԱՀ-ն,

- ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Ղևոնդ Ալիշանի անվան N 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների համար- 85 500 000 (ութսունհինգ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 14 250 000 (տասնչորս միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն,

- ՀՀ Լոռու մարզի «Ալավերդու թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների համար – 220 500 000 (երկու հարյուր քսան միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 36 750 000 (երեսունվեց միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի Պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

5.4 Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով[1] (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4.1 Պայմանագրի գնից՝ մինչև 25%-ի չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել Կապալառուի բանկային հաշվին որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում՝ հիմք ընդունելով աշխատանքների կատարման տվյալ տարվա համար նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում կատարվելիք աշխատանքների օրացուցային գրաֆիկով սահմանված ժամկետները:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.6 Տույժի հաշվարկման հիմքում ընկած աշխատանքային օրերի մեջ չեն ներառվում կատարողական ակտում արտացոլված ժամանակահատվածի վերջին օրվանից մինչև կատարողական փաստաթղթերը Պատվիրատուին հանձնելու ամսաթիվն ընկած մինչև հինգ աշխատանքային օրը, որը տրվում է Կապալառուին՝ տվյալ փուլի աշխատանքներն ավարտելուց հետո կատարողական փաստաթղթերը կազմելու և աշխատանքները տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից հաստատվելու հետ կապված գործողությունները պատշաճ կերպով իրականացնելու համար:

6.7 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.8 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն

---

[1] *Վճարման ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի ձեռքբերման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ընդհանուր ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ընդհանուր ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում բանկային երաշխիքների ձևով ներկայացրած ապահովումների ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթղթերի առկայությամբ):

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ՝

«Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ
գ/հ ք. Երևան, Փափազյան 8
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500257094970
ՀՎՀՀ 02648403
Տնօրեն՝

_____ Հ. Սուքիասյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1
«07» 03 2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/17 գնման պայմանագրի

ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցում

Ծավալաթերթ-Նախահաշիվ

ՀՀ դրամ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
	Շինարարական աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ, քանդված հատվածների վերականգնում և հողային աշխատանքներ				
	Քանդման և հողային աշխատանքներ				
1	Կույր տարածքի քանդում /отмостка/	մ^3	9.560	951.31	9,094.50
2	բետոնե եզրաքարերի պամոնտաժում	գմ	10.250	951.31	9,750.91
3	Բացվածքի իրականացում	մ^3	0.820	951.31	780.07
4	փայտե պատուհանի ապամոնտաժում	մ^2	3.200	951.31	3,044.19
5	Ասֆալտաբետոնե ծածկույթի քանդում 112,53	մ^3	5.627	951.31	5,352.53
6	Խճի շերտի քանդում 112,53	մ^3	16.880	951.31	16,057.60
7	ջեռուցման մարտկոցի ապամոնտաժում	հատ	1.000	951.31	951.31
8	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ	տն	62.589	951.31	59,541.18
	Իրականացվող բացվածքում դռան տեղադրում քանդված հատվածների վերականգնում			-	-
9	դուռ 1800x2200 /սպիտակ մետլոպլաստ / 1հատ	մ^2	4.002	28,539.12	114,213.56
10	Ներքին պատերի բ/որակ գ/ավազե սվաղ	մ^2	8.650	2,853.91	24,686.36
11	50մմ հաստությամբ գ/ավազե հարթեցնող շերտ	մ^2	0.950	2,853.91	2,711.22
12	կերամիկական հատակի վերականգնում	մ^2	0.950	10,781.45	10,242.37
13	Պատերի բ/որակ գաջե սվաղ	մ^2	8.650	2,853.91	24,686.36
14	Պատերի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	8.650	2,092.87	18,103.30
15	մետալոպլաստե խողովակ գոյություն ունեցող ջեռուցման համակարգը ապամոնտաժելուց հետո վերականգնելու համար	գմ	12.300	2,536.81	31,202.82
	Հողային աշխատանքներ			-	-
16	4-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատրով, բարձելով ա/ինքնաթափերի վրա	մ^3	1005.28	951.31	956,330.76
17	Բնահողի տեղափոխում 7կմ	տն	1910.03	951.31	1,817,028.45
18	4-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատրով կողլիցք	մ^3	1211.90	951.31	1,152,886.18
19	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ^3	63.784	951.31	60,678.22
20	Բնահողի հետ լիցք բուլդոզերով	մ^3	1211.90	951.31	1,152,886.18
21	Բնահողի ետլիցք ձեռքով	մ^3	63.784	951.31	60,678.22
22	Բնահողի տափանում տնևմոտափանիչներով	մ^3	1275.68	951.31	1,213,564.41
	Ընդամենը՝ քանդման և հողային աշխատանքներ				**6,744,470.69**
	Ճարտարապետաշինարարական մաս				
	Հատակներ				
23	Ջերմամեկուսիչ խարամաբետոն 100 մմ B-12,5 դասի բետոնից	մ^3	46.550	52,040.48	2,422,484.40
24	տոփանած խիճ 150 մմ	մ^3	69.820	6,438.00	449,501.15
25	ջրամեկուսիչ շերտ / /հզոգամ/	մ^2	465.500	1,448.55	674,299.34
26	30մմ հաստությամբ գ/ավազե հարթեցնող շերտ	մ^2	181.067	2,414.25	437,139.75
27	45մմ հաստությամբ գ/ավազե հարթեցնող շերտ	մ^2	298.889	3,219.00	962,123.32
	Ընդամենը՝ Հատակներ				**4,945,547.96**
	Արտաքին պատեր				
28	15 սմ հաստությամբ պ/բլոկե պատերի շարվածք , անցքերի բետոնազմամբ և ամրանավորումով 27,82մ2	մ^3	4.173	44,429.06	185,402.47
29	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0.083	577,577.80	48,204.64
30	30 սմ հաստությամբ պ/բլոկե պատերի շարվածք , անցքերի բետոնազմամբ և ամրանավորումով 319,11մ2	մ^3	95.733	44,429.06	4,253,327.17
31	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	1.915	577,577.80	1,105,865.10
32	Միաձույլ ե/բ բարավորի պատրաստում B-25 դասի բետոնից /պատուհանագոգի ներքևի հատվածում /	մ^3	2.264	97,743.93	221,292.26
33	Ամրանի արժեքը Φ14մմ A500c դասի	տն	0.185	577,577.80	106,898.10

07. 03 2022թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/17 գնման պայմանագրի

1	2	3	4	5	6
34	Ամրանի արժեքը Փ8մմ Ac-1 դասի	տն	0.103	577,577.80	59,259.48
35	20 սմ հաստությամբ պ/բլոկե պատերի շարվածք , անցքերի բետոնացմամբ և ամրանավորումով 92,8մ2 /պարապետ/	$մ^3$	18.560	44,429.06	824,603.35
36	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0.371	577,577.80	214,396.88
37	30 սմ հաստությամբ պ/բլոկե պատերի շարվածք , անցքերի բետոնացմամբ և ամրանավորումով 75,7մ2 /պարապետ/	$մ^3$	22.710	44,429.06	1,008,983.95
38	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0.454	577,577.80	262,335.83
39	Պատերի ջերմոմեկուսացում 100 մմ հաստ.երկշերտ (վերին շերտը՝ 30 մմ, 205 կգ/խմ խտությամբ, ստորինը՝ 70 մմ հաստությամբ, 120 կգ/մխ խտությամբ) չայրվող բազալտե հանքասալաթաղանթ սալերով 636.14մ2	$մ^3$	63.614	9,774.40	621,788.38
40	ցոկոլային հատվածի ջերմամեկուսացում /պենոպլեքս 50 մմ / 145,64մ2	$մ^3$	7.282	53,314.87	388,238.91
41	Պատերի ջրամեկուսացում 2 շերտ իզոգամից	$մ^2$	672.960	3,554.33	2,391,918.92
42	ցոկոլային հատվածի բազալտե երեսպատում / բազալտ՝ 30մմ , ց/ա շաղախ՝ 30 մմ/, սալերի խարսխումով	$մ^2$	115.460	32,877.50	3,796,036.34
43	տրվերտինե երեսպատում / տրավերտին՝ 30 մմ , ց/ա շաղախ՝ 30 մմ, սալերի խարսխումով	$մ^2$	175.460	32,877.50	5,768,686.44
44	Արտաքին պատերի բ/որակ ց/ավազե սվաղ	$մ^2$	497.500	3,998.61	1,989,309.17
45	Պատերի ճակատային ներկում, մածկապատումով	$մ^2$	497.500	2,932.32	1,458,828.97
	կոմպոզիտային պանելի / алюкобонд /դեկորատիվ հատված			-	-
46	Մետաղական կարկասի պատրաստում մետաղական էլեմենտներից	տն	1.244	395,418.64	491,998.61
47	80x60x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	24.460	13,328.72	326,020.51
48	40x40x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	253.750	7,552.94	1,916,557.75
49	Մետաղական թերթ	տն	0.240	1,066,297.46	256,167.30
50	Մետաղական մասերի 2շերտ ներկում	$մ^2$	49.449	3,554.33	175,757.13
51	կոմպոզիտային պանել /алюкобонд /	$մ^2$	321.400	35,543.25	11,423,599.20
	Ընդհամենը՝ Արտաքին պատեր				**39,295,476.87**
	Դեկորատիվ թերթեր, տանիք				
52	Մետաղական կարկասի պատրաստում մետաղական էլեմենտներից	տն	2.768	165,714.78	458,721.71
53	40x40x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	668.95	2,420.55	1,619,228.35
54	50x40x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	55.650	3,165.34	176,151.07
55	40x30x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	32.560	2,420.55	78,813.18
56	Մետաղական թերթ	տն	0.135	446,871.31	60,390.19
57	Մետաղական մասերի 2շերտ ներկում	$մ^2$	124.607	1,489.57	185,611.70
58	Պատերի երեսպատում 10մմ հաստությամբ ֆիբրոցեմենտե սալերով /գունավոր/	$մ^2$	362.540	17,502.46	6,345,340.73
	տանիք			-	-
59	Տանիքածածկույթի պատրաստում 100մմ հաստ սենդվիչ պանելներով	$մ^2$	267.50	15,081.90	4,034,409.53
60	Ցինկապատ թիթեղներից ծածկույթի պատրաստում գունավոր 0.5մմ հաստությամբ	$մ^2$	229.316	4,468.72	1,024,745.87
61	ջրհորդանի ջերմամեկուսացում / հանքային բամբակ /	$մ^3$	9.650	35,377.31	341,391.06
62	ջրատար խողովակի ջերմամեկուսացում / հանքային բամբակ /	$մ^3$	2.400	37,239.27	89,374.25
63	ջրատար խողովակ 150 մմ մոխրագույն ներկված	գմ	39.600	10,240.80	405,535.70
64	ջրատար խողովակ 100 մմ	գմ	20.150	6,516.87	131,314.94
65	խողովակ Մ 170 մմ / կույր տարածքի / отмостка / մեջ /	գմ	8.400	10,240.80	86,022.72
66	գիպսոտվարաթուղթ 12,5մմ հաստությամբ / ներքին հատվածում ջրհորդանի բողարկում /	$մ^2$	1.500	3,351.53	5,027.30
67	ցինկապատ թիթեղյա դետալ L - 700 մմ /պիպ /конёк// ՏՓԴ -14 / 0.55 մմ հաստ. /	$մ^2$	12.600	4,468.72	56,305.82
68	Պիպի արժեքը 700մմ	գմ	18.000	4,468.72	80,436.89
69	ցինկապատ թիթեղյա դետալ L - 250 մմ /պիպ /конёк// ՏՓԴ - 15 / 0.55 մմ հաստ. /	$մ^2$	4.125	4,468.72	18,433.45
70	Պիպի արժեքը 250մմ	գմ	16.500	4,468.72	73,733.82
71	ցինկապատ թիթեղյա դետալ L - 370 մմ /պիպ /конёк// ՏՓԴ - 16 / 0.55 մմ հաստ. /	$մ^2$	6.660	4,468.72	29,761.65
72	Պիպի արժեքը 370մմ	գմ	18.000	3,351.53	60,327.58
73	ջրհորդանի տաքացվող մալուխ	գմ	80.45	3,351.53	269,630.77

1	2	3	4	5	6
	Հանդերձարանի տանիք			-	-
74	Ցինկապատ պրոֆիլ թիթեղից ծածկույթի պատրաստում գունավոր 0.5մմ հաստությամբ ԿՊ-21-0.5մմ	մ²	161.250	5,399.70	870,701.01
75	ցինկապատ թիթեղյա դետալ L - 700 մմ /պիպ /конёк// ՏԹԴ -14 / 0.55 մմ հաստ. /	մ²	17.815	4,468.72	79,610.18
76	Պիպի արժեքը 700մմ	գմ	25.450	4,468.72	113,728.83
77	ցինկապատ թիթեղյա դետալ L - 250 մմ /պիպ /конёк// ՏԹԴ - 15 / 0.55 մմ հաստ. /	մ²	5.863	4,468.72	26,197.85
78	Պիպի արժեքը 250մմ	գմ	23.450	4,468.72	104,791.39
79	ջրատար խողովակ 150 մմ մոխրագույն ներկված	գմ	22.350	4,468.72	99,875.81
80	ջրատար խողովակ 100 մմ	գմ	6.550	4,468.72	29,270.09
81	Ցինկապատ թիթեղներից ծածկույթի պատրաստում գունավոր 0.5մմ հաստությամբ	մ²	68.815	4,468.72	307,514.70
82	ցինկապատ թիթեղյա դետալ L -460 մմ ՏԹԴ - 23 / ձնարգել / / 0.55 մմ հաստ. /	գմ	25.500	3,351.53	85,464.07
	միջանցքի տանիք			-	-
83	Ցինկապատ պրոֆիլ թիթեղից ծածկույթի պատրաստում գունավոր 0.5մմ հաստությամբ ԿՊ-21-0.5մմ	մ²	19.650	5,399.70	106,104.03
84	Մետաղական կավառամածի պատրաստում և տեղադրում	տն	0.375	165,714.78	62,144.69
85	100x100x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	21.560	4,468.72	96,345.52
86	40x30x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	62.500	2,420.55	151,284.51
87	Մետաղական մասերի 2շերտ ներկում	մ²	17.374	1,489.57	25,879.82
88	ջրատար խողովակ 150 մմ մոխրագույն ներկված	գմ	7.500	5,399.70	40,497.72
89	խողովակ Մ 170 մմ / կուր տարածքի / отмоска / մեջ /	գմ	2.500	10,240.80	25,602.00
90	Ներդիր էլեմենտներ	տն	0.020	558,589.14	11,225.41
91	ցինկապատ թիթեղյա դետալ L -445 մմ ՏԹԴ - 23 / ձնարգել / / 0.55 մմ հաստ. /	մ²	9.568	5,399.70	51,661.59
92	Պիպի արժեքը 445մմ	գմ	21.500	2,979.14	64,051.60
93	ցինկապատ թիթեղյա դետալ L -340 մմ ՏԹԴ - 24 / ձնարգել / / 0.55 մմ հաստ. /	մ²	2.635	3,351.53	8,831.29
94	Պիպի արժեքը 340մմ	գմ	7.750	3,351.53	25,974.37
95	ցինկապատ թիթեղյա դետալ L -735-640 մմ ՏԹԴ - 26 / ձնարգել / / 0.55 մմ հաստ. /	մ²	5.270	3,351.53	17,662.57
96	Պիպի արժեքը 680մմ	գմ	7.750	3,351.53	25,974.37
	տանիք բարձրացող աստիճաններ			-	-
97	տանիք բարձրացող աստիճանների պատրաստում և տեղադրում մետաղական խողովակներից	տն	0.272	165,714.78	45,065.14
98	89x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	35.650	3,165.34	112,844.31
99	40x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	16.500	3,165.34	52,228.08
100	Մետաղական մասերի 2շերտ ներկում	մ²	12.035	1,489.57	17,927.22
	Ընդհամենը՝ դեկորատիվ թերթեր, տանիք				**18,289,166.45**
	Դռներ, պատուհաններ				
101	մուգ մոխրագույն Ալյումինե արտաքին դուռ , լայն պրոֆիլ 60 մմ, ջերմային կամրջակով , ջերմային ապակեպատումը / 4 + 4 մմ /	մ²	18.080	99,853.18	1,805,345.45
102	մետալոպլաստե պատուհաններ / մոխրագույն / բացվող մաս	մ²	4.845	37,444.94	181,420.74
103	մետալոպլաստե պատուհաններ / մոխրագույն / չբացվող մաս	մ²	97.991	37,444.94	3,669,267.26
104	Պատուհանագոգի ցինկապատ թիթեղ Լ - 340 մմ / 0.55մմ հաստ. 72,04գմ	մ²	24.494	6,656.88	163,050.93
105	Պատուհանագոգերի տեղադրում պլաստմասե նյութից	մ²	9.950	6,656.88	66,235.95
106	Պատուհանագոգի արժեքը B=17սմ	գմ	39.800	4,160.55	165,589.72
107	պատուհանագոգի մշակում ց/ա շղախով	մ³	2.388	58,247.69	139,095.48
	Ընդհամենը՝ դռներ, պատուհաններ				**6,190,005.54**
	ներքին հարդարում				
108	10սմ հաստությամբ պ/բ միջնորմների շարվածք ամրանավորումով և բետոնագմամբ	մ²	11.280	7,062.40	79,663.85
109	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0.023	510,062.04	11,507.00
110	20 սմ հաստությամբ պ/բլոկե պատերի շարվածք , անցքերի բետոնագմամբ և ամրանավորումով 180,73մ2	մ³	36.146	39,235.55	1,418,208.06
111	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0.723	510,062.04	368,734.05
	Հ1 դպրոցը մարզադահլիճին կապող միջանցք			-	-
112	Պատերի բ/որակ գաջե սվաղ	մ²	61.350	3,531.20	216,639.06

1	2	3	4	5	6
113	Պատերի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	61.350	2,589.55	158,868.68
114	Առաստաղի բ/որակ գաջե սվաղ	մ^2	35.800	3,531.20	126,416.92
115	Առաստաղի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	35.800	2,589.55	92,705.77
116	Պ/գրանիտե հատակների պատրաստում /12մմ/	մ^2	35.800	13,340.08	477,574.89
117	պրեսգրանիտե շրիշակ H - 100 մմ 28,35գմ	մ^2	2.835	13,340.08	37,819.13
	Հ2 միջանցք			-	-
118	Պատերի բ/որակ գաջե սվաղ	մ^2	108.500	3,531.20	383,135.09
119	Պատերի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	108.500	2,589.55	280,965.80
120	Առաստաղի բ/որակ գաջե սվաղ	մ^2	35.800	3,531.20	126,416.92
121	Առաստաղի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	35.800	2,589.55	92,705.77
122	Պ/գրանիտե հատակների պատրաստում /12մմ/	մ^2	35.800	13,340.08	477,574.89
123	պրեսգրանիտե շրիշակ H - 100 մմ 28,35գմ	մ^2	2.835	13,340.08	37,819.13
	Հ3 մարզչի սենյակ			-	-
124	Պատերի բ/որակ գաջե սվաղ	մ^2	55.180	3,531.20	194,851.56
125	Պատերի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	55.180	2,589.55	142,891.18
126	Առաստաղի բ/որակ գաջե սվաղ	մ^2	19.500	3,531.20	68,858.38
127	Առաստաղի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	19.500	2,589.55	50,496.16
128	Պ/գրանիտե հատակների պատրաստում /12մմ/	մ^2	19.500	13,340.08	260,131.57
129	պրեսգրանիտե շրիշակ H - 100 մմ 17,8*գմ	մ^2	1.780	13,340.08	23,745.34
	Հ4 Օժանդակ սենյակ / կաթսայատուն /			-	-
130	Պատերի բ/որակ գաջե սվաղ	մ^2	34.100	3,531.20	120,413.89
131	Պատերի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	34.100	2,589.55	88,303.54
132	Առաստաղի բ/որակ գաջե սվաղ	մ^2	6.240	3,531.20	22,034.68
133	Առաստաղի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	6.240	2,589.55	16,158.77
134	Պ/գրանիտե հատակների պատրաստում /12մմ/	մ^2	6.240	13,340.08	83,242.10
135	պրեսգրանիտե շրիշակ H - 100 մմ 11գմ	մ^2	1.100	13,340.08	14,674.09
	Հ5 հաշմանդամություն ունեցող անձանց ա/հ			-	-
136	Ներքին պատերի բ/որակ գ/ավազե սվաղ	մ^2	38.750	3,531.20	136,833.96
137	Պատերի երեսպատում հախճասալով	մ^2	38.750	13,340.08	516,928.13
138	Պլաստմասե կախոցի առաստաղի պատրաստում գինկապատ պրոֆիլներով	մ^2	8.910	5,492.98	48,942.43
139	Պ/գրանիտե հատակների պատրաստում /12մմ/	մ^2	8.910	13,497.03	120,258.52
	Հ6 Հանդերձարան			-	-
140	Պատերի բ/որակ գաջե սվաղ	մ^2	72.230	3,531.20	255,058.50
141	Պատերի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	72.230	2,589.55	187,042.95
142	Առաստաղի բ/որակ գաջե սվաղ	մ^2	21.860	3,531.20	77,192.01
143	Առաստաղի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	21.860	2,589.55	56,607.49
144	Պ/գրանիտե հատակների պատրաստում /12մմ/	մ^2	21.860	13,340.08	291,614.16
145	պրեսգրանիտե շրիշակ H - 100 մմ 23,3գմ	մ^2	2.330	13,340.08	31,082.39
	Հ7 ա/հ			-	-
146	Ներքին պատերի բ/որակ գ/ավազե սվաղ	մ^2	46.190	3,531.20	163,106.08
147	Պատերի երեսպատում հախճասալով	մ^2	46.190	13,340.08	616,178.33
148	Պլաստմասե կախոցի առաստաղի պատրաստում գինկապատ պրոֆիլներով	մ^2	11.560	7,062.40	81,641.32
149	Պ/գրանիտե հատակների պատրաստում /12մմ/	մ^2	11.560	13,340.08	154,211.33
	Հ8 Հանդերձարան			-	-
150	Պատերի բ/որակ գաջե սվաղ	մ^2	69.750	3,531.20	246,301.13
151	Պատերի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	69.750	2,589.55	180,620.87
152	Առաստաղի բ/որակ գաջե սվաղ	մ^2	20.290	3,531.20	71,648.03
153	Առաստաղի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	20.290	2,589.55	52,541.90
154	Պ/գրանիտե հատակների պատրաստում /12մմ/	մ^2	20.290	13,340.08	270,670.24
155	պրեսգրանիտե շրիշակ H - 100 մմ 22,5գմ	մ^2	2.250	13,340.08	30,015.18

1	2	3	4	5	6
	Հ9 ս/հ			-	-
156	Ներքին պատերի բ/որակ ց/ավազե սվաղ	$մ^2$	41.230	3,531.20	145,591.33
157	Պատերի երեսպատում հախճասալով	$մ^2$	41.230	13,340.08	550,011.53
158	Պլաստմասե կախոցի առաստաղի պատրաստում գիննապատ պրոֆիլներով	$մ^2$	10.000	7,062.40	70,623.98
159	Պ/գրանիտե հատակների պատրաստում /12մմ/	$մ^2$	10.000	13,340.08	133,400.81
	Հ10 Մարզական պարագաների պահեստային սենյակ			-	-
160	Պատերի բ/որակ գաջե սվաղ	$մ^2$	55.490	3,531.20	195,946.23
161	Պատերի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	$մ^2$	55.490	2,589.55	143,693.94
162	Առաստաղի բ/որակ գաջե սվաղ	$մ^2$	17.300	3,531.20	61,089.74
163	Առաստաղի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	$մ^2$	17.300	2,589.55	44,799.16
164	հետերոգեն սպորտային ՊՎՔ ծածկույթ 4.5 մմ հաստությամբ՝ 1 մմ հոմոգեն պաշտպանիչ շերտով , դասը՝ 34/43 , 1քմ քաշը՝ 3.1 կգ, 10մմ հաստությամբ շրիշակներով	$մ^2$	17.300	13,732.44	237,571.18
	Հ11 Մարզադահլիճ			-	-
165	Պատերի բ/որակ գաջե սվաղ	$մ^2$	421.460	3,531.20	1,488,259.12
166	Պատերի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	$մ^2$	421.460	2,589.55	1,091,390.29
167	հետերոգեն սպորտային ՊՎՔ ծածկույթ 4.5 մմ հաստությամբ՝ 1 մմ հոմոգեն պաշտպանիչ շերտով , դասը՝ 34/43 , 1քմ քաշը՝ 3.1 կգ, 10մմ հաստությամբ շրիշակներով	$մ^2$	253.440	13,732.44	3,480,349.17
168	Պատուհանները քողարկող ցանց 4մմ հաստության պարանի հյուսվածքից	$մ^2$	66.10	6,277.68	414,954.83
169	Առաստաղի քողարկող ցանց 4 մմ հաստության պարանի հյուսվածքից	$մ^2$	253.44	6,277.68	1,591,015.92
170	Սանհանգույցի լամինատե միջնորմների	$մ^2$	15.750	27,464.88	432,571.81
171	Մարտկոցների մետաղական քողաարկիչների պատրաստում և տեղադրում	տն	0.294	941,653.01	276,849.28
172	ներկված Անկյունակ 30x30x3 / փոշոնորկված / մուգ մոխրագույն /	գմ	143.600	3,923.56	563,422.72
173	դրոբ ցանց 2.77մմ, 25X25մմ / փոշեներկված / մուգ մոխրագույն /	$մ^2$	26.750	3,923.56	104,955.14
174	մետալոպլաստե դռներ / մոխրագույն/	$մ^2$	30.140	35,311.99	1,064,303.37
175	բռնաձողեր մետաղական նիկելապատ խողովակներից Մ 30մմ x 3մմ	գմ	2.800	2,746.48	7,690.15
176	Բաստկետբոլի գույքային վահաններ /վահան,զամբյուղ,ցանց/	կ-տ	2.000	207,948.37	415,896.74
	Ընդհամենը՝ ներքին հարդարման աշխատանքներ				**21,575,437.66**
	Արտաքին բարեկարգում				
177	Բազալտե կողաքար 300 x 150 բետոնե հիմքով	գմ	125.460	11,516.04	1,444,803.00
178	Հատակների պատրաստում 30մմ հաստությամբ անկանոն /կոտրտված/ բազալտե սալերով /բռենկա/	$մ^2$	168.560	10,582.30	1,783,753.30
179	Խճի շերտի պատրաստում 15սմ հաստությամբ	$մ^3$	25.284	7,469.86	188,868.03
180	Միաձույլ ե/բ հատակի պատրաստում B-15 դասի բետոնից	$մ^3$	16.856	60,381.42	1,017,789.16
181	Ամրանի արժեքը Φ8մմ Ac-1 դասի	տն	0.607	404,617.72	245,522.03
182	B-12,5 դասի բետոնով բուտաբետոնե զանգվածի պատրաստում աստիճանների տակ	$մ^3$	4.280	59,136.44	253,103.95
183	Միաձույլ ե/բետոնե աստիճանների և հարթակների պատրաստում B-15 դասի բետոնից	$մ^3$	0.635	60,381.42	38,342.20
184	Ամրանի արժեքը Φ8մմ Ac-1 դասի	տն	0.011	404,617.72	4,588.36
185	Աստիճանների երեսպատում 40մմ հաստությամբ բազալտե սալերով	$մ^2$	6.130	24,899.55	152,634.25
186	Աստիճանատակերի երեսպատում 20մմ հաստությամբ բազալտե սալերով	$մ^2$	1.350	23,032.09	31,093.32
187	Կողային հատվածի երեսպատում 30մմ հաստությամբ բազալտե սալերով, սալերի խարսխումով	$մ^2$	3.160	23,032.09	72,781.40
188	B-12,5 դասի բետոնով բուտաբետոնե զանգվածի պատրաստում թեքահարթակների տակ	$մ^3$	7.250	60,381.42	437,765.27
189	Միաձույլ ե/բ թեքահարթակների պատրաստում B-15 դասի բետոնից	$մ^3$	1.952	60,381.42	117,864.52

1	2	3	4	5	6
190	Ամրանի արժեքը Φ8մմ Ac-1 դասի	տն	0.070	404,617.72	28,432.49
191	Թեքահարթակների երեսպատում 40մմ հաստությամբ բազալտե սալերով	$մ^2$	19.520	28,011.99	546,794.09
192	Թեքահարթակների կողային հատվածի երեսպատում 30մմ հաստությամբ բազալտե սալերով, սալերի խարսխումով	$մ^2$	5.760	23,032.09	132,664.84
193	մետաղական բազրիք Մ 40մմ x 3մմ /փոշեներկած / մուգ մոխրագույն	գմ	44.830	15,562.22	697,654.19
194	մետաղական բազրիք Մ 16մմ x 3մմ /փոշեներկած / մուգ մոխրագույն/	գմ	8.500	15,562.22	132,278.84
195	Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 5սմ հաստությամբ	$մ^2$	23.560	6,224.89	146,658.47
	նոր կառուցվող ճանապարհ			-	-
196	կոպճավազ 100 մմ 205,43մ2	$մ^3$	20.543	4,357.42	89,514.52
197	Խճի շերտի պատրաստում 19սմ հաստությամբ	$մ^2$	205.430	2,178.71	447,572.59
198	Բիտումի տարածում /40մմ շերտի համար/ 4,12տն-1000մ2-ու համար	տն	0.846	161,847.09	136,982.78
199	Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 5սմ հաստությամբ	$մ^2$	205.430	6,224.89	1,278,779.68
	Ընդհամենը՝ արտաքին բարեկարգում, նոր կառուցվող ճանապարհ				**9,426,241.29**
	ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՄԱՍ				
200	Բուտաբետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B-7.5 դասի բետոնից	$մ^3$	12.380	58,988.19	730,273.74
201	Բետոնե պատերի պատրաստում B-15 դասի բետոնից	$մ^3$	8.980	63,576.16	570,913.89
202	Միաձույլ ե/բ ժապավենային հիմքերի պատրաստում B-25 դասի բետոնից	$մ^3$	54.510	72,096.67	3,929,989.56
203	Ամրանի արժեքը Φ16մմ A500c դասի	տն	2.002	426,025.80	852,703.41
204	Ամրանի արժեքը Φ8մմ Ac-1 դասի	տն	1.576	426,025.80	671,361.27
205	Բուտաբետոնե հիմքերի պատրաստում B-7.5 դասի բետոնից	$մ^3$	29.950	58,988.19	1,766,696.16
206	Միաձույլ ե/բ կետային հիմքերի պատրաստում B-25 դասի բետոնից	$մ^3$	19.200	72,096.67	1,384,256.09
207	Ամրանի արժեքը Φ12մմ A500c դասի	տն	0.209	426,025.80	89,205.54
208	Ամրանի արժեքը Φ8մմ Ac-1 դասի	տն	0.028	426,025.80	12,116.17
209	Միաձույլ ե/բ սալի պատրաստում B-25 դասի բետոնից /-0,05նիշ/	$մ^3$	67.200	72,096.67	4,844,896.32
210	Ամրանի արժեքը Φ10մմ A500c դասի	տն	5.769	426,025.80	2,457,593.71
211	Ամրանի արժեքը Φ8մմ Ac-1 դասի	տն	0.670	426,025.80	285,539.53
